ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 28-Ա **20 հունվարի 2026 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ «ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ» ԽՈՐԱԳՐՈՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2026» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջներով որոշում եմ՝

1.Հաստատել՝

1). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում «Լինենք առողջ» խորագրով «Գեղարքունյաց ձմեռ–2026» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում «Լինենք առողջ» խորագրով «Գեղարքունյաց ձմեռ–2026» մարզամշակութային միջոցառման անցկացման կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ համագործակցել համայնքների ղեկավարների հետ և միջոցառումների օրերին ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի համայնքներ և հանրակրթական ուսումնական հաստատություններ:

20.01.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2026 թվականի հունվարի 20 -ի

N 28-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ «ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ» ԽՈՐԱԳՐՈՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2026» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն – ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Հարությունյան Վանիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Վարդանյան Լուսինե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Դաշտոյան Գրիգոր - Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Դավթյան Վահագն - Մարտունի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Մարգարյան Արթուր - Սևան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Օհանյան Ռոբերտ - Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Մկրտչյան Կարեն - Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Չարվադարյան Գեղամ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ:

Ստորագրող՝
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-01-20 12:08:24 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՆԿ-ով

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի հունվարի 20-ի
N 28-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ «ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ» ԽՈՐԱԳՐՈՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2026 » ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1.ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում «Լինենք առողջ» խորագրով «Գեղարքունյաց ձմեռ – 2026» մարզամշակութային միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն ու խնդիրներն են՝

նպաստել՝

- ✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում ձմեռային մարզաձևերի և ազգային խաղերի մասսայականացմանը.
- ✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին.
- ✓ մարզի ազգաբնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորմանը.

2.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Միջոցառումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում և հանրակրթական ուսումնական հաստատություններում 2026 թվականի փետրվար ամսվա ընթացքում:

3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳԻՐԸ

- ✓ Մասսայական դահուկավազք /կամ կրոսավազք 300մ.,500մ. և 1000 մետր /
- ✓ Մրցումներ՝ սահնակներով
- ✓ Պարանի ձգում /թիմերով/
- ✓ 8 կգ և 16 կգ կշռաքարերի բարձրացում /ազատ ոճով /
- ✓ Մարզական ցուցադրական ելույթներ,
- √ Սպորտային տարաբնույթ խաղեր՝ /մինի ֆուտբոլ, ձմեռային վոլեյբոլ, շարժական խաղեր, դասական վոլեյբոլ, բասկետբոլ, շախմատ, շաշկի, նարդի և այլն/
- ✓ Բարձունքի գրավում
- ✓ Ձնագնդիով / կամ թենիսի գնդակով / հարված նշանակետին

- ✓ Հրաձգություն օդամղիչ հրացանից՝ 10 մետր հեռավորությունից /ազատ ոճով , 5 կրակոց /
- ✓ Սպորտլանդիայի անցկացում
- ✓ Մրցումներ՝ ազգային խաղաձևերից
- ✓ Ազգային կոխ ըմբշամարտի անցկացում երեք քաշային կարգերում / մինչև 40 կգ., 50 կգ և 60 կգ ./

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Միջոցառման ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Համայնքապետարանները՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ համատեղ կազմակերպում են միջոցառման անցկացումը: Առանձին միջոցառումներ կարող են անցկացնել նաև հանրակրթական ուսումնական հաստատությունները: Համայնքի ղեկավարի աշխատակազմը կամ ուսումնական հաստատության տնօրինությունը ձևավորվում է միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտե, իսկ միջոցառաման անցկացման արդյունքները ամփոփելու, լավագույն մասնակիցներին խրախուսելու նպատակով՝ մրցավարական հանձնաժողով:

5. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Միջոցառումները կլուսաբանվեն մարզում գործող լրատվական միջոցներով և կտեղադրվեն համայնքապետարանների, հանրակրթական ուսումնական հաստատությունների, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան և կայք էջերում: Միջոցառումն ամփոփելու նպատակով անհրաժեշտ է մինչև 2026 թվականի մարտի 6-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն ներկայացնել միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն ու լուսանկարներ:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր ծախսերը /լուսաբանում, հավաստագրեր, հուշանվերներ և այլն/ հոգում են միջոցառումն իրականացնող կազմակերպությունները:

7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Համայնքի ղեկավարի կողմից հավաստագրերով ,հուշանվերներով, հուշամեդալներով կպարգևատրվեն առանձին վարժություններում մրցանակային տեղեր գրված թիմերը և մարզիկները:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-01-20 13:39:39 GMT+4
Հավաստված է էլեկտրոնային կնիքով

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ